ԿԱՐԾԻՔ

Հայկ Արայի Մկրտչյանի՝ «Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

<u>Ատենախոսության թեմայի արդիականությունը:</u> Հայաստանի ռազմավարական դոկտրինը սահմանում է 5 հիմնարար արժեքներ, որոնց ապահովումը երաշխավորելու է ազգային անվտանգությունը: Դրանցից մեկը պետության և ժողովրդի պաշտպանվածությունն է, որի կենսագործման հիմնական քայլերից է բնակչության ֆիզիկական գոյության ապահովումը*: Եթե փորձենք պարզ և հակիրճ տալ «ազգային անվտանգություն» հասկացությունը, ապա կարող ենք ուղղակի այն բնութագրել որպես անհատի (անձի), հասարակության և պետության պաշտպանվածության վիճակ: Դրա երաշխավորումը հատկապես կարևոր է այսօրվա աշխարհում, երբ գլոբալիզացիայի՝ որպես բազմաշերտ գործընթացի հետևանքները հաճախ անկանխատեսելի են և առաջ են բերում (կամ կարող են բերել) համամարդկային նշանակության խնդիրներ, ներառյալ՝ քրեաիրավական ու կրիմինալոգիական բնույթի: Այդ խնդիրները կարիք ունեն բազմակողմ և համապարփակ գիտական ուսումնասիրության, վերլուծության և լուծումների փնտրման ու առաջարկման, ընդ որում՝ այստեղ կարևոր է քրեական իրավունքի և կրիմինալոգիայի գիտության ներգրավվածությունը: Ասվածով պայմանավորված՝ պետության, հասարակության և (հատկապես) անհատի կամ անձի անվտանգության ապահովումը չափազանց կարևոր և հիմնարար նշանակության է, ինչն էլ հատուկ ընդգծում է հրապարակային պաշտպանության ներկայացած ատենախոսի՝ Հայկ Արայի Մկրտչյանի հետազոտության արդիականությունը: Ավելին՝ հետազոտությունը, որը նվիրված է ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

---

* ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, Բաժին I (հաստատվել է ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի N ՆՀ-37-Ն հրամանագրով, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2007.02.15/11(535)):

ՔՐԵԱՀՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ, **ընդգրկուն է, դրանով վեր են հանվում մի քանի հարցեր և կոնկրետ առաջարկությունների հետ միասին փորձ է արվում ուղիներ փնտրել գտնելու դրանց պատասխանները**: Սա, անշուշտ, բարձրացնում է ատենախոսության արժեքը:

Ատենախոսության գիտական նորույթը և նշանակությունը: Հայազգի ռուսաստանցի խոշորագույն գիտնականներից Արկադի Ավագի Տեր-Ակոպովը 20-րդ դարի վերջում հրատարակված աշխատանքներից մեկում նկատել է, որ քրեական քաղաքականության (իր բոլոր ուղղություններով) հիմքն են կազմում անձի անվտանգության հիմնախնդիրները: Արդարացի նկատառում է, և պատահական չէ, որ հետխորհրդային Հայաստանում քրեական իրավունքի ազդեցիկ մի քանի գիտնականների աշխատություններում հստակ ընդգծված է անտրոպոկենտրոն ուղղվածությունը[†]: Նրանք հետազոտման են ենթարկել քրեաիրավական հովանոցի ներքո անձի անվտանգության և իրավունքի հարաբերակցության հարցը: Պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանն առաջ անցնելով ընդգծել է, որ քրեական իրավունքի և օրենքի հիմնարար նշանակության խնդիրները պետք է հետազոտվեն ոչ այլ կերպ, քան «անձի անվտանգության ապահովման համատեքստում»:

Այստեղ հատկանշական է, որ ատենախոսը, ըստ էության, հետևել է նույն գծին և փորձել է մեկ լրացուցիչ քայլ կատարել (նոր շունչը հաղորդել) ոլորտում առկա խնդիրների լուծման ուղղությամբ: Նա ամփոփել է առ այսօր հետազոտված մի շարք արժեքավոր աշխատանքներ և գտել, որ սահմանադրական նորմերի նախատեսումը խնդրի լուծման մի մասն է, ինչն անպայմանորեն չի նշանակում հռչակված դրույթների փաստացի իրագործում: Իսկ դրա համար, ըստ ատենախոսի, անհրաժեշտ է անձի իրավական անվտանգության ապահովման միասնական

[†] Օրինակ՝ Ռոբերտ Զավենի Ավագյանի *(«Հանուն օրինականության», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան 2002, «Մարդու իրավունքներ. քրեաիրավական երաշխիքներ», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան 2007)* և Սերժիկ Սերգեյի Ավետիսյանի *(«Проблемы разграничения преступного от непреступного поведения (теория и практика уголовно-правового обеспечения безопасности человека)», изд-во РАУ, Ереван 2011, «Правовые основы обеспечения безопасности человека в условиях глобализации (уголовно-правовые, криминологические, уголовно-исполнительные и уголовно-процессуальные аспекты)», изд-во РАУ, Ереван, 2010)*, նաև այլ գիտնականների աշխատություններում:

համակարգ: Սա, բնականաբար, ընդգծում է ատենախոսության գիտական կարևորությունը:

Ատենախոսության գիտական նորույթը և նշանակությունն արտահայտված են նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում [Ատենախոսություն, էջ 9-12]:

<u>Ատենախոսության բովանդակությունը:</u> Ատենախոսին, նրա գիտական ղեկավարի աջակցությամբ, հաջողվել է պատրաստել կարևոր գիտական աշխատություն, որը բաղկացած է տիտղոսաթերթից, ներածական մասից (Ներածություն), հիմնական մասից (3 գլուխ, 7 պարագրաֆ), եզրափակիչ մասից (Ամփոփում, Օգտագործված գրականության ցանկ):

Ներածության մեջ [էջ 4-12] ատենախոսը ներկայացրել է հետազոտության թեմայի արդիականությունը և դրա գիտական մշակվածության վիճակը: Նա ցույց է տվել հետազոտության օբյեկտը և առարկան, հստակ ընդգծել նպատակը և խնդիրները: Հետազոտության նորմատիվ հենքը պատկերավոր ցույց է տալիս, թե այն որքան ընդգրկուն է՝ միջազգային փաստաթղթերից մինչև ներպետական օրենսդրական ակտերի՝ շրջանառության ավարտման փուլին հասցված նախագծեր: Ընդգրկուն է նաև հետազոտության տեսական հիմքը՝ պետության և իրավունքի տեսությունից մինչև քրեագիտություն, հասարակագիտության դոկտրինալ աղբյուրներից մինչև գիտության այլ ոլորտների վերլուծական նյութեր: Դա է վկայում նաև օգտագործված գրականության հարուստ ցանկը:

Ատենախոսության **1-ին գլխում** [էջ 13-40] ատենախոսին հաջողվել է ներկայացնել քրեական իրավունքի տեսության մեջ առկա մի քանի հիմնախնդիրներ, որոնք առնչվում են անձի անվտանգությանը: Որոշակիորեն քննարկելով «անվտանգություն» և «անձի անվտանգություն» եզրույթները՝ ատենախոսը հետազոտել է երևույթը ոչ միայն իբրև վիճակ կամ համակարգ, այլև իբրև գործունեություն: Նա կանգ է առել անձի անվտանգության ապահովման միջազգային-իրավական հիմք ձևավորող փաստաթղթերի բովանդակության վրա՝ դրանք բաժանելով մի քանի խմբերի: Եվ եզրահանգել է, որ անձի (անհատի) անվտանգությունը ազգային անվտանգության անքակտելի մասն է՝

վերահաստատելով, որ դրա ապահովումը ցանկացած իրավական, ժողովրդավարական պետության «առաջնահերթություններից է»: Նաև հատկանշական է, որ ատենախոսը կարևորել է Ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակման կարևորությունը՝ այն տեսնելով որպես անձի անվտանգության ապահովման խնդրի լուծումներից մեկը:

Ատենախոսության **2-րդ և 3-րդ գլուխներում** [էջ 41-62 և 63-125] ատենախոսը հետազոտել է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության արժեհամակարգը, ինչպես նաև վերլուծության ենթարկել անձի անվտանգության պաշտպանության միջոցները քրեական իրավունքում: Կարևոր է թվում այն, որ ատենախոսը, վերլուծելով գործող օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան, անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության արժեհամակարգի բովանդակությունը կազմող արժեքային բաղադրիչները ենթարկել է պայմանական բաժանման՝ նյութական արժեքների և հոգևոր արժեքների: Եվ դրանով հանդերձ՝ առանձին մասերով հետազոտել միջազգային իրավաբանության վերաբերելի դրույթները (միջազգային դատական ատյանի նախադեպային դիրքորոշումները): Ատենախոսը նաև դիտարկել է անհրաժեշտ պաշտպանությունը՝ որպես անձի անվտանգության պաշտպանության արդարացի և օրինական միջոց, իսկ ծայրահեղ անհրաժեշտությունը՝ որպես ինքնավար քրեաիրավական միջոց: Բացի դրանից, ատենախոսն առանձնակի ուշադրություն է դարձրել դատաիրավական բարեփոխումների համատեքստում անձի անվտանգության պաշտպանության միջոցների հետագա կատարելագործման հիմնախնդիրներին՝ վեր հանելով որոշակի հարցեր, որոնց լուծումը, ըստ ատենախոսի, կզարգացնի անձի անվտանգության պաշտպանության մեխանիզմները:

Ամփոփման մեջ [էջ 126-130] ատենախոսը խմբավորել է այն հիմնական դրույթները, եզրակացությունները և առաջարկությունները, որոնց հանգել է համապատասխան հիմնախնդիրների հետազոտման արդյունքում:

Այստեղ հատկապես արժանի է ընդգծել **Օգտագործված գրականության ցանկը** [էջ 131-148], որը բավականաչափ ընդգրկուն է՝ միջազգային

փաստաթղթերից մինչև ներպետական նորմատիվ իրավական ակտեր, հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատանքներից մինչև տարբեր դատական ատյանների ակտեր:

Հետազոտության հիմնական դրույթները շարադրված են ատենախոսի թվով **8 աշխատանքներում (մենագրություններ և գիտական հոդվածներ**[‡]):

Ատենախոսության սեղմագիրը պատրաստված է պատշաճ մակարդակով և արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

<u>Նկատառումներ:</u> Ատենախոսության բովանդակության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ատենախոսին, ընդհանուր առմամբ, հաջողվել է հասնել իր առջև դրված նպատակին՝ լուծելով նախանշված խնդիրները:

Միևնույն ժամանակ, աշխատանքի վերաբերյալ կան **որոշակի նկատառումներ: Մասնավորապես՝**

1. Ատենախոսն առաջարկներից մեկով կարևորում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի «ողջ համակարգի ձևափոխում»՝ կենտրոնում դիտելով անձի անվտանգությունը: Սկզբունքորեն ընդունելի համարելով անձնակենտրոն շեշտադրում անելու մոտեցումը՝ ատենախոսությունից հստակ չէ, թե որն է լինելու այդ «համակարգի ձևափոխ[ման]» գործնական նշանակությունը. արդյո՞ք քրեական օրենքի կոնկրետ մասի կառուցվածքի ֆորմալ փոփոխությունը կարող է ունենալ պրակտիկ նշանակություն, եթե այո, ապա ինչու՞ այո, և ինչպե՞ս:
2. Ատենախոսն իր աշխատանքի մի քանի հատվածներում վերլուծել է դատական պրակտիկան և խոսել է քրեական օրենսդրության կատարելագործման մասին, որոշակիորեն ներկայացրել առկա խնդիրների սեփական լուծումները: Առավել հիմնավորված, ցանկալի կլիներ, եթե նա ուսումնասիրության առարկա դարձներ քննչական և (կամ) դատախազական մարմինների իրավակիրառական պրակտիկան՝ նաև այդ դիրքերից

[‡] Ատենախոսության սեղմագիր, էջ 19:

գնահատելով անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության արդյունավետության բարձրացման հարցը.

3. Աշխատանքը կշահեր, եթե դրանում վերլուծության ենթարկվեին ոլորտին առնչվող միջազգային իրավական չափանիշներն ու միջազգային լավագույն փորձը: Իրավահամեմատական վերլուծությունը, թեկուզև ԱՊՀ մի քանի անդամ պետությունների քրեական օրենսդրությունների հետ, հնարավորություն կտար վեր հանել այս կամ այն լուծման դրական կամ բացասական կողմերը կամ առավել ամբողջական դարձնել ներկայացված հետազոտությունը՝ դրանով հանդերձ նպաստելով ներպետական օրենսդրության և պրակտիկայի կատարելագործմանը:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ թվարկված մի քանի նկատառումները մասնակի են, կրում են քննարկման ենթակա բնույթ, նաև պայմանավորված են հետազոտված խնդիրների գիտագործնական հետաքրքրությամբ: Դրանք չեն նսեմացնում հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, հետևաբար, իրենց համակցությամբ չեն ազդում աշխատանքի դրական գնահատականի վրա:

Եզրահանգում: Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Հ. Ա. Մկրտչյանի՝ հրապարակային պաշտպանության ներկայացված «Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման **ատենախոսությունը ամբողջական, ավարտուն գիտական հետազոտություն է, այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների համար ներկայացվող պահանջներին**: Եվ, որ ոչ պակաս կարևոր է՝ ինքնուրույն աշխատանք է, որտեղ հեղինակին հաջողվել է տեքստում ներկայացնել և հիմնավորել սեփական պատկերացումներն ու դիրքորոշումները:

Այսպիսով, **Հայկ Արայի Մկրտչյանն արժանի է իր կողմից հայցվող՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Ս. ՍԵԴՐԱԿՅԱՆ

«17» 05 2020թ.